Պարույր Սևակ

Բանաստեղծները

Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Անկարող են ապրել առանց թթվածընի:
Սակայն նրանք
Ամեն վայրկյան նա՛խ այրվում են անթթվածին,
Հետո՛ միայն հրդեհվում են՝ քարածխի պես:
Նրանց լացը չի կտրվում
Ամե՞ն տեսակ քաղցրավենիք ստանալով:
Թե լալիս են՝
Ընդերկրյա անցուղո՛ւ պես:
Նրանք նաև ծիծաղում են,
Ու ծիծաղը
Զրնգում է մաքրահունչ դրամի՛ պես,
Եվ դրանից աշխարհն ինքն է հարստանում,
Բայց ո՛չ իրենք:
Թե քրտնում են՝ ո՛չ ամոթից,
Այլ միմիայն... ապակո՛ւ պես՝
Իրենց ներսի՛ տաքությունից,
Երբ որ... սաստիկ ցուրտ է դրսո՛ւմ:
Ու թե նրանք սուտ են ասում,
Ապա՝ շա՛տ-շա՛տ՝ որսորդի՛ պես,

Ո՛չ ավելի:
Իսկ թե ուրիշ կերպ են ստում՝
Այդ իրե՛նք չեն,
Այլ ծպտված ճարպըկորդիք,
Որ գործում են միայն նրանց անձնագրով:
Բոլորի պես՝
Նրանք նույնպես
Անկարող են ապրել առանց հաց ու ջրի,
Սակայն նրանք
Չեն էլ կարող ապրել միա՛յն հաց ու ջրով...
Անկեղծ ասած՝
Նրանց, իրոք, չնախանձել չի՛ կարելի,
Բայց լինում են և այնպիսի՛ ժամանակներ,
Երբ որ նրանց... պետք է խղճա՛լ:

09.X.1961թ.
Երևան